

Բեռլին, 08-ը սեպտեմբերի, 2021թ.

**Պարզաբանումներ Գերմանիայի արտգործնախարարության
«Ընդլայնված համագործակցություն Արևելյան գործընկերության անդամ
պետությունների և Ռուսաստանի քաղհասարակությունների հետ»
ծրագրի վերաբերյալ**

Արևելյան գործընկերության անդամ պետությունների և Ռուսաստանի քաղհասարակությունների հետ ընդլայնված համագործակցությանն ուղղված ծրագիրը քաղհասարակական կազմակերպություններին և դրանցում ներգրավված քաղաքացիներին հնարավորություն է տալիս դերակատարություն ստանձնել որպես առանցքային գործիչներ ու պետական քաղաքականության կարևոր գործընկերներ և աջակցություն ցուցաբերել իրենց երկրներում ընթացող տևական անցումային գործընթացներին:

Դաշնային կառավարությունը ցանկանում է իր արտաքին կրթամշակութային քաղաքականության գործիքներով նպաստել մինչքաղաքական, քաղհասարակական հարթակներում անդրսահմանային հանդիպումների և քննարկումների ծավալմանը և ժողովուրդների երազանքների ու վերքերի, հակամարտություններով լի անցյալի, բայց նաև զարգացման հետ կապվող հույսերի և հասարակական-սոցիալական առաջընթացի վերաբերյալ փոխըմբռնման հաստատմանը: Սա կհաջողվի միայն այն դեպքում, եթե նշված երկրների ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային համայնքների ակտիվ քաղաքացիներն առիթ ստանան իրենց տարածաշրջանում ամրապնդելու սոցիալական համերաշխությունն ու քաղհասարակական կառույցների զարգացումը, խթանելու ազատ-ժողովրդավարական և բազմակարծիք հասարակարգի հիմքերը և այդպիսով ապագայում ևս նպաստեն Եվրոպայում ժողովուրդների խաղաղ համակեցությունը: Նախատեսված է, որ այս նպատակի համար 2022թ. բյուջեով Գերմանիայի արտգործնախարարությանը կրկին միջոցներ կհատկացվեն:

Ծրագրի իրագործելիությունը կովիդ-19-ի համավարակի պայմաններում

Կովիդ-19-ի համավարակը ընդմիջել և ընդմիջում է մեր բնականոն կյանքը աշխարհի բոլոր անկյուններում և անմիջականորեն ազդում է նաև Արևելյան գործընկերության անդամ պետություններում և Ռուսաստանում իրականացվող մեր ծրագրերի վրա: Հաճախ մեր վերջին երկու շրջափուլերի նախագծերը հնարավոր է եղել իրականացնել միայն թվային և հիբրիդային ձևաչափերով: Համավարակի անկանխատեսելի զարգացումների պատճառով այս աջակցային փուլում էլ բոլոր նախագծերը պետք է ներկայացվեն խելամիտ պլանավորմամբ՝ անհրաժեշտության դեպքում այլընտրանքային ձևաչափերի անցման

հնարավորություններով, որ ծրագրի նպատակն իրագործվի նաև այն դեպքում, եթե վերստին կովիդ-19-ի հետ կապված սահմանափակումներ մտցվեն: Անհրաժեշտ է հայեցակարգի մեջ ավելի ու ավելի շատ դիտարկել հատկապես թվային և հիբրիդ ձևաչափերի հնարավորությունները:

Հատկապես հիբրիդ ձևաչափերը կշարունակեն կարևոր դեր խաղալ այնպիսի միջոցառումների դեպքում, ինչպիսին երկխոսություններն ու հանդիպումներն են, որոնք ԱրլԳՌ ծրագրերի կարևորագույն նպատակներից են: Եվ այդուհանդերձ, ուղիղ հանդիպումները կենտրոնական նշանակություն ունեն, երբ հատկապես խոսքը հասարակությունների միջև կորսված վստահությունը վերականգնելու մասին է (օրինակ՝ տարածքային հակամարտությունների համատեքստում): Այդպիսի միջոցառումները պետք է թվային ձևաչափով իրականացնել միայն այն դեպքում, երբ հանգամանքներն այլ բան թույլ չեն տալիս: Հիբրիդ ձևաչափերը, որոնք միմյանց են հաջորդում առցանց և ոչ առցանց փուլերով կամ անցկացվում են մասամբ տեղական հարթության վրա՝ ոչ առցանց, մասամբ էլ՝ միջազգային հարթության վրա՝ առցանց, կարող են հարմար լինել նաև 2022թ. հնարավոր բարդ պայմաններում երկխոսային գործընթացները շարունակելու համար:

Համակարգերի թվայնացումը և արդիականությունը՝ որպես նպատակադրում

Այս տարի նույնպես աջակցություն կցուցաբերվի ձևաչափերի և համակարգերի թվայնացմանը: Այդպիսով կնվազեցվեն հասանելիության խոչընդոտները, գործընկեր երկրներում և Գերմանիայում ծրագրին կներգրավվեն թիրախային ավելի լայն խմբեր, կխթանվի դերակատարների ցանցի զարգացումը, ինչպես նաև կդյուրացվի տարածաշրջանային բազմակողմ նախագծերի իրականացումը: Նախագծերի բովանդակությունները կարող են պատշաճ իրագործվել միայն այն դեպքում, եթե մասնակից կազմակերպություններում, հատկապես թիրախային երկրների գործընկեր կազմակերպություններում առկա լինի անհրաժեշտ թվային ենթակառուցվածքը: Նկատի ունենալով քաղհասարակության դերակատարների առջև ծառայած բազմաբնույթ մարտահրավերները՝ ծրագիրը 2022թ. բյուջետային տարվա կտրվածքով ևս միջոցներ կհատկացնի կառուցվածքային ծախսերին: Դրանք այն ծախսերն են, որոնք առաջանում են աջակցություն ստացող նախագծերի իրականացման ժամանակ (օրինակ՝ համակարգչային տեխնիկա և ծրագրային ապահովում ձեռք բերելու համար) կամ կառուցվածքային փոփոխությունների միտված նախագծերի ծախսեր են: Նախապայմանը, ինչպես և նախկինում, բովանդակային առնչությունն է աջակցային չորս նպատակներից որևէ մեկին: Այսպիսի ծախսերի ստանձնումը առաջին անգամ տեղի է ունեցել անցյալ տարի և կշարունակվի առայժմ 2022թ. աջակցային տարում: Մանրամասն տեղեկություններ, ինչպես նաև այն նախագծերի տեսակների ամփոփ պատկերը, որոնք ավելի իրագործելի են թվային միջոցներով, կարող եք քաղել „FAQs

Skizzeneinreichung ÖPR“ փաստաթղթից, որը գտնվում է <http://oepr.diplo.de>. կայքի ներբեռնումների բաժնում:

Նախագծերի կայուն և բնապահպան պլանավորումը՝ որպես նպատակադրում

Շրջակա միջավայրի և կլիմայի պաշտպանությունը մեր ժամանակների առանցքային թեմաներից է և պետք է գերակայի մեր ծրագրի շրջանակում իրականացվող առանձին գործողությունների հայեցակարգերի և իրականացման մասին որոշումներում: Նպատակն այն է, որ բոլոր մասնակիցները շահագրգռված լինեն իրենց նախագծերն իրականացնել կայուն հեռանկարով և բնական ռեսուրսներ խնայելու մոտեցմամբ: Նախագծերի հայեցակարգերում պետք է համոզիչ կերպով ներկայացնել, թե ինչպես են հաշվի առնվում բնապահպանական կայունության ասպեկտները, և/կամ թե ինչ նպաստ է բերում նախագիծը շրջակա միջավայրի և բնության պաշտպանության գործին: Օդանավով ճամփորդությունները, որոնք առանց այդ էլ ներկայիս սահմանափակումներով պայմաններում դժվար է իրագործել, պետք է նախատեսել միայն այն դեպքում, եթե դրանք միանշանակ անփոխարինելի են նախագծի նպատակի իրականացման համար, հակառակ դեպքում պետք է օգտվել թվային ձևաչափերից կամ բնապահպանական առումով ցանկալի այլընտրանքներից:

Բացի այդ՝ նախագծի հայեցակարգում պետք է ներառված լինեն ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակները (Sustainable Development Goals, SDGs), և նախագծային աշխատանքում ավելի մեծ ուշադրություն դարձվի կայուն զարգացման տարբեր դրսևորումներին:

Ի՞նչ նպատակներ պետք է իրագործվեն նախագծի միջոցով

Դաշնային կառավարությունը սատարում է այնպիսի նախագծեր, որոնք նշված երկրներում գործող քաղհասարակությունների հետ գերմանական քաղհասարակության համագործակցության միջոցով լիարժեքորեն կխթանեն անհրաժեշտ տրանսֆորմացիոն և ներքին ինտեգրացիոն գործընթացները: Սա ընդգրկում է մշակութային և կրթական քաղաքականության ծրագրային աշխատանքի ողջ գունապնակը (հատկապես՝ լրատվամիջոցները, գիտության, կրթության, այդ թվում՝ միջին մասնագիտական կրթության, մշակույթի, լեզվի և երիտասարդության հետ տարվող աշխատանքի ոլորտները):

Ուստի աջակցություն կարող են ստանալ այն միջոցառումները, որոնք համագործակցության տևական քաղհասարակական համակարգեր կկառուցեն կամ կխթանեն Գերմանիայի և Արևելյան գործընկերության երկրների կամ Ռուսաստանի գործիչների միջև: Դրա հետ մեկտեղ՝ նախագծերը պետք է համապատասխանեն տվյալ երկրների կամ տարածաշրջանի պահանջներին և

առնչվեն այնպիսի թեմաների, որոնք կարևոր են այդ համատեքստում:

Նախագծերը պետք է նաև

- **հասանելի լինեն քաղհասարակության հնարավորին մեծ թվով դերակատարների (նաև՝ դրանք տարածողների՝ միջնորդ օղակների միջոցով) և**
- **հետապնդեն ստորև նշված լրացուցիչ նպատակներից որևէ մեկը.**
 1. **«Բազմակարծության ամրապնդում» – Տեղեկատվական, լրատվական և կարծիքների բազմազանության կայացում և զարգացում**

Բազմակարծության գաղափարը կետրոնական և սահմանադիր բաղադրիչ է ժամանակակից ժողովրդավարական պետություններում: Նրա օրինականությունն առաջին հերթին պայմանավորված է հասարակության մեջ առկա կարծիքների, շահերի և նպատակների բազմազանության ճանաչմամբ և դրանց հանդեպ հարգանքով: Ներկա իրավիճակը շեշտում է հավասարապես թե՛ հեռարձակողների և թե՛ սպառողների (ընդունողների) գրազետ և անվտանգ մոտեցման անհրաժեշտությունը լրագրողական և հատկապես նաև գիտական բովանդակություններին, տեղեկություններին ու տվյալներին:

Ուստի 2022 թվականին Դաշնային կառավարությունը «Մեդիահամագործակցություն» աջակցային առաջնահերթության տակ միջոցներ կտրամադրի հատկապես մեդիալ տեղեկատվական համակարգերի պահպանման, պրոֆեսիոնալացման, ինչպես նաև ամենատարբեր ոլորտների մեդիաներկայացուցիչների միջև կապերի ամրապնդման համար:

Գիտական հաղորդակցության, փաստական լրագրության, փաստերի ստուգման և մեդիագրագիտության թեմատիկ բնագավառներում կիրախուսվեն այն նախագծերը, որոնք զբաղվում են այդ բնագավառների կապակցվածությանը սոցիալական մեդիաներին, թվայնացմանը և առհասարակ լրատվությանը:

Բացի այդ՝ ծրագիրը կիրախուսի նաև այնպիսի նախագծեր, որոնք կձառայեն բազմակարծիք մեդիադաշտի ձևավորմանն ու զարգացմանը: Հատկապես ուշադրության կարժանանան այն նախագծերը, որոնք մեդիադերակատարների կայացման և որակավորման, ինչպես նաև բարձրորակ և բազմակարծիք տեղական մեդիաառաջարկները առավել հասանելի դարձնելու միջոցով կամրապնդեն անվստահելի և կեղծ տեղեկատվության հանդեպ հասարակության դիմադրողականությունը:

Այսպիսի միջոցառումներ են օրինակ՝ լրագրողների, բլոգերների և այլ մեդիագործիչների համար կազմակերպվող կրթական և

վերապատրաստական ծրագրերը նշված երկրներում, ինչպես նաև լրագրողների համար նախատեսվող հոսպիտացիոն (աշխատանքային հյուրընկալություն) ծրագրերը Գերմանիայում, նաև այն նախագծերը, որոնք ուղղված կլինեն դպրոցներում և համալսարաններում կամ քաղաքական կրթության ոլորտում մեդիակարողությունների ամրապնդմանը:

2. «Արժեքների վերաբերյալ դիսկուրսների խթանում» – Արժեքների ամրապնդում քաղհասարակական երկխոսության և մշակութային նախաձեռնությունների միջոցով

Այս անվանակարգում աջակցություն կարող են ստանալ հատկապես փոխանակման և մշակութային նախագծերը: Նմանությունների, բայց նաև տարբերությունների մասին բաց երկխոսությունը ներքին ինտեգրացիոն գործընթացների, ինչպես նաև միջպետական գործընկերությունների հիմքն են: Այն կայանում է այնտեղ, որտեղ մարդիկ հանդիպում են միմյանց, փորձ և կարծիքներ փոխանակում, համագործակցում: Այնպիսի հիմնարար արժեքներ, ինչպիսիք են հարգանքը մարդու իրավունքների հանդեպ, օրինաչափ վարչարարությունը, դատարանների անկախությունը, անձի՝ կյանքի և ազատ զարգացման իրավունքը, ձայների մեծամասնությամբ որոշումներ կայացնելու սկզբունքը, քաղաքական լարված այս ժամանակներում ավելի ու ավելի մեծ նշանակություն են ձեռք բերում:

Ուստի աջակցության կարող են արժանանալ այն միջոցառումները, որոնք կտարածեն և կխթանեն վերոթվարկյալ արժեքները քաղհասարակական փորձի փոխանակման միջոցով կամ մշակութային միջոցառումների կազմակերպմամբ: Որպես այդպիսին կարող են դիտարկվել քաղհասարակական խմբերի մասնակցությամբ երկխոսային և հարթակային միջոցառումները, ինչպես նաև մշակութային կյանքի տարբեր ոլորտների բազմազան ձևաչափերի միջոցառումներ, որոնց հիմնական նպատակն այս արժեքների տարածումը կլինի:

3. «Հետագա հեռանկարների հնարավորություն» . բուհական, մասնագիտական և հասարակական-քաղաքական կրթության և վերապատրաստման միջոցառումներ

Այստեղ խոսքն առաջին հերթին կրթական և վերապատրաստական ծրագրերի մասին է („Capacity Building“): Բոլորի, և հատկապես երիտասարդների առանցքային պահանջմունքն է՝ ունենալ սեփական տնտեսական, հասարակական և սոցիալական առաջընթացի հեռանկար և զարգացման ու կայացման հնարավորություններ տեսնել իր և իր շրջապատի համար: Սրանից է ծնվում սեփական երկրում և հանուն իր երկրի հասարակական, քաղաքական և սոցիալական ակտիվություն ցուցաբերելու երիտասարդների շահագրգռվածությունը: Կրթական ծրագրերն ու վերապատրաստական միջոցառումներն այն հիմքն են, որի վրա յուրաքանչյուր ոք կառուցում է իր խիստ անձնական ապագայի հեռանկարներն ու երազանքները:

Ուստի աջակցություն կարող են ստանալ այն ծրագրերը, որոնք ուղղված կլինեն բուհական, մասնագիտական և հասարակական-քաղաքական կրթությանն ու վերապատրաստմանը, ընդ որում՝ նաև կրթաթոշակների տրամադրման միջոցով: Թիրախային խումբն առաջին հերթին, բայց ոչ միայն երիտասարդներն են:

4. «Երկխոսության և փոխըմբռնման աջակցություն» - տարածքային հակամարտությունների պատճառով կորսված փոխվստահության վերահաստատում

Աջակցային այս նպատակը վերաբերում է այն միջոցառումներին, որոնք միտված են չլուծված տարածքային հակամարտություններ ունեցող հասարակությունների միջև նախաքաղաքական դաշտում անհրաժեշտ փոխվստահության վերականգնմանը: Տարածաշրջանում առկա չլուծված տարածքային հակամարտությունները և ամենատարբեր պատմական հանգամանքներով ի հայտ եկած լարվածությունները հանգեցրել են նաև քաղհասարակական խոր տարակարծության ինչպես երկրների ներսում, այնպես էլ երկրների միջև: Սրան առանձնակի նպաստում են այլոց ընկալման և ինքնընկալման միջև անջրպետը, ինչպես նաև փոքրամասնությունների ինտեգրացիոն խնդիրները: Արդյունքում տեղի է ունենում փոխվստահության կորուստ, նախապաշարմունքների և երկխոսելու պատրաստակամության դեֆիցիտի առաջացում և խորացում: Սա կարող են կանխել այնպիսի մարդիկ և կազմակերպություններ, որոնք ձգտում են հասկանալ դիմացինի պատկերացումները և դրա հիման վրա զարգացնում են իրենց փոխզիջման պատրաստակամությունը:

Ուստի աջակցության կարող են արժանանալ հասարակական կառույցների միջև նախաքաղաքական հարթության վրա իրականացվող այն համագործակցային նախաձեռնությունները, որոնք հասարակական լարվածությունների խորապատկերին հետապնդում են այնպիսի նպատակներ, որոնք մշակութային և կրթական ոլորտների գործիքներով կվերականգնեն երկխոսության և փոխըմբռնման պատրաստակամությունը՝ այդպիսով նպաստելով կորսված վստահության վերականգնմանը և նախապաշարմունքների վերացմանը: Այստեղ ևս անհրաժեշտ է օգտվել հիբրիդային ձևաչափերից, որպեսզի ճամփորդական և շփման սահմանափակումների պատճառով կարևոր միջանձնային հանդիպումները ամբողջապես չդադարեն:

Գերմանիայում, ինչպես նաև Արևելյան գործընկերության երկրներում և Ռուսաստանում քաղաքացիական հասարակությունները մեծ համերաշխություն են ցուցաբերում նրանց հանդեպ, ովքեր առավել շատ են տուժել կամ դեռևս տուժում են կովիդ-19-ի համավարակից, դրա հետևանքներից և դրանց ածանցյալ ավտորիտար միտումներից: Այս **խոցելի խմբերին** առավել օգնելու, ինչպես նաև ընդհանուր առմամբ ծրագրի թիրախային խմբերի **բազմազանությունը** խթանելու նպատակով գալիք տարում առանձնակի կերպով կխրախուսվեն այնպիսի նախագծերը, որոնք ուղղված կլինեն վերոնշյալ սոցիալական խմբերին, և/կամ այդ խմբերը էապես ներգրավված կլինեն նախագծերում: Ուստի հատուկ ուշադրության պետք է արժանանա քաղաքացիական հասարակությունում կանանց դերակատարման խթանումը հատկապես, բայց ոչ միայն Բելառուսում:

Բոլոր չորս աջակցային ուղղություններում առանձնակի ուշադրության կարժանանան նաև երիտասարդները, ակտիվ աջակցություն կցուցաբերվի նրանց գործունեությանը իրենց երկրներում: Հատուկ ուշադրություն կհատկացվի այն նախագծերին, որոնք կխթանեն ընդհանրապես Երկրորդ համաշխարհային պատերազմի, և մասնավորապես նացիոնալ-սոցիալիզմի հանցագործությունների շուրջ քննարկումներն ու հիշողությունը: Առաջիկա տարիներին Դաշնային կառավարության առանցքային նպատակներից է լինելու հատկապես երիտասարդների համար Երկրորդ համաշխարհային պատերազմի ժառանգությունը քննելու բազմաբնույթ հնարավորություններ ստեղծելը՝ ի նպաստ ապագայամետ հիշողության մշակույթի ձևավորման:

Աջակցության հիմնական նախապայմաններ

1. Ո՞ր երկրներում պետք է իրականացվի քաղհասարակական համագործակցության նախագիծը՝ աջակցության արժանանալու համար:

Նախագծերը կարող են աջակցություն ստանալ, եթե իրականացվում են **Գերմանիայում, Ռուսաստանում կամ Արևելյան գործընկերության անդամ երկրներում:** Արևելյան գործընկերության անդամ երկրներն են Հայաստանը, Ադրբեյջանը, Բելառուսը, Վրաստանը, Մոլդովան և Ուկրաինան: Աջակցություն ստացող մասնակիցների հիմնական բնակության վայրը պետք է լինի Արևելյան գործընկերության անդամ որևէ պետությունում, Ռուսաստանում, Գերմանիայում և կամ Լեհաստանում կամ Ֆրանսիայում (տես ներքևում):

Համագործակցային նախագծերը կարող են ընթանալ Գերմանիայի և Արևելյան գործընկերության անդամ որևէ երկրի (**երկկողմ նախագծեր**) կամ մի քանի երկրների (**բազմակողմ նախագծեր**) և Ռուսաստանի հասարակական կազմակերպությունների միջև:

Քանի որ ծրագրի նպատակը Գերմանիայի և Արևելյան գործընկերության անդամ երկրների ու Ռուսաստանի միջև քաղհասարակական համագործակցության համակարգերի կայացումը, զարգացումն ու պաշտպանությունն է, **գուտ ազգային նախագծերի, ինչպես նաև այն նախագծերի համար, որոնք չունեն գործընկեր Գերմանիայում կամ Արևելյան գործընկերության անդամ երկրներում կամ Ռուսաստանում, աջակցություն նախատեսված չէ:**

Դաշնային կառավարության մտադրությունն է թույլ չտալ ծրագրերի խիստ կուտակումներ մայրաքաղաքներում և խոշոր մետրոպոլիտերում՝ նշված երկրների քաղհասարակությունների հնարավորին մեծ թվով գործիչների հնարավորություն տալով կապեր հաստատել միմյանց և գերմանացի գործիչների միջև: Ուստի Գերմանիայի կառավարությունը մեծ ուշադրություն կդարձնի այն նախագծերին,

որոնք կանցկացվեն **թիրախային երկրների գյուղական բնակավայրերում և մարզերում:**

Դաշնային կառավարությունը 2022 թվականին կկենտրոնանա մասնավորապես նաև այն երկրների վրա, որտեղ քաղհասարակությունների հետ համագործակցությունը դեռ կարելի է զարգացնել: Այդ երկրներն են **Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը և Մոլդովան:**

Գերմանիայի և Ֆրանսիայի կառավարությունները 2017թ. հուլիսի 13-ին կայացած Գերմանաֆրանսիական նախարարական խորհրդաժողովի ժամանակ որոշում են կայացրել Գերմանիայի և Ֆրանսիայի միջև համագործակցության հետագա խորացման վերաբերյալ: Այդ պատճառով Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունը և Ֆրանսիայի արտաքին գործերի և Եվրոպայի նախարարությունն այս որոշումն իրականացնելու ճանապարհին պայմանավորվել են, որ ֆրանսիական ոչ կառավարական կազմակերպությունները նաև 2022թ. առավել ծավալուն մասնակցություն ունենան «Արևելյան գործընկերության անդամ երկրների և Ռուսաստանի քաղհասարակությունների հետ համագործակցության ընդլայնում» ծրագրին:

Լեհաստանի քաղհասարակության գործընկերները կարող են շարունակել քաղհասարակության նախաձեռնությունների մաս կազմել այս ծրագրի շրջանակում: Ողջունելի են ինչպես համատեղ գերմանաֆրանսիական, այնպես էլ գերմանալեհական նախաձեռնությունները թիրախային մեկ կամ մի քանի երկրների հետ միասին: Դիմումը ներկայացնել կարող է միայն գերմանական գործընկերը, աջակցություն ստացող մասնակիցները, սակայն, կարող են բնակվել և գործել Ֆրանսիայում կամ Լեհաստանում: Այսպիսի նախագծերի համար նախապայման է լեհական կամ ֆրանսիական գործընկեր կազմակերպության ակտիվ մասնակցությունը:

2. Ուլքե՞ր են աջակցության արժանացող նախագծերի հեղինակները:

Աջակցության արժանացող նախաձեռնությունների հեղինակները պետք է լինեն Գերմանիայում, Ֆրանսիայում կամ Լեհաստանում և Արևելյան գործընկերության անդամ երկրներում կամ Ռուսաստանում գործող քաղաքացիական հասարակության անդամներ: Ուստի ծրագրի թիրախային խումբ են համարվում **պետական և տնտեսական գործունեության ոլորտից դուրս գտնվող կազմակերպությունները**, ինչպես օրինակ՝ լրատվամիջոցները, միությունները, հիմնադրամները (ներառյալ քաղաքական հիմնադրամները), բուհերը, երիտասարդական կազմակերպությունները, մշակութային և այլ հասարակական կազմակերպությունները: Քաղաքացիական հասարակությանն են պատկանում նաև հանրային ռադիոհեռուստատեսային և մեդիաընկերությունները:

Պետական կամ տնտեսական գործունեության ոլորտի դերակատարները բացառիկ դեպքերում նույնպես կարող են ներգրավվել ծրագրում այն դեպքում, եթե տեղական առանձնահատկությունների պատճառով թիրախային երկրներում հասարակական կազմակերպությունները բացակայում են, սակայն աջակցություն ստացող կոնկրետ նախաձեռնությունները խոստանում են լիարժեքորեն ապահովել հետապնդվող քաղաքական նպատակների իրականացումը:

Ծրագրի շրջանակում մեծ ուշադրություն է դարձվում նախագծի գործընկերների միջև հավասարը հավասարի հետ համագործակցային սկզբունքին: Բոլոր գործընկերները հնարավորինս պետք է հավասարապես ընդգրկված լինեն նախագծի մշակման, կազմակերպման և անցկացման մեջ: Սա ապահովելու համար հայտ ներկայացնելիս նախնական ընտրության փուլից հետո պահանջվում է ներկայացնել հայտարարություն առ այն, որ նախագիծը մշակվում և իրականացվում է միասնաբար: Հայտարարությունը պետք է ստորագրեն նախագծի մասնակից բոլոր գործընկերները:

3. Ի՞նչ ժամանակահատվածում պետք է իրականացվեն նախագծերը:

Աջակցային միջոցներն այսպես կոչված **նախագծային միջոցներ** են: Սա նշանակում է, որ նրանք ենթարկվում են **բյուջեի տարեկան կտրվածքի սկզբունքին**: Այդ պատճառով սկզբունքորեն աջակցություն կարող են ստանալ այն նախագծերը, որոնք 2022թ. ընթացքում, այսինքն՝ **ամենաուշը մինչև 31.12.2022թ., ամփոփված, ավարտված** կլինեն:

Առանձին հիմնավորված դեպքերում, սակայն, Գերմանիայի արտգործնախարարությունը կարող է **սահմանափակ ծավալով** շեղվել այս սկզբունքից և հավանություն տալ **նաև մեկ տարվա տևողությունը գերազանցող նախագծերին**: Կարևոր նախապայման է սակայն, որ **հետապնդվող քաղաքական նպատակների իրականացման համար մեկ տարին գերազանցող կամ մի քանի քարվա տևողության պարտադիր լինելը խիստ հիմնավորված լինի**:

Նախագծի շարունակականությունը միայն չի կարող բավարար հիմք հանդիսանալ հավանության համար: Սրանով արտգործնախարարությունը ցանկանում է, որ հնարավորին շատ հասարակական կազմակերպություններ հնարավորին մեծ թվով նախագծերի համար օգտվեն աջակցությունից:

Մեկ տարին գերազանցող տևողության պարտադիր լինելը որևէ նախագծի դեպքում նշանակում է, որ ակնկալվող աջակցությամբ հետապնդվող արտաքին-քաղաքական նպատակները չեն կարող իրականացվել առանց մեկ տարին գերազանցող կամ բազմամյա ժամանակահատվածի հաստատված անհրաժեշտության: Օրինակ՝ այն դեպքերում, երբ կոնկրետ նախաձեռնությունն իր բնույթով իրագործելի է միայն, ասենք, բուհական մեկ կիսամյակը գերազանցող ժամանակահատվածում:

Խիստ հիմնավորված լինելը ենթադրում է, որ կոնկրետ նախաձեռնությունը մեկ տարին գերազանցող տևողությամբ իրականացնելուն որևէ այլընտրանք չկա:

Աջակցային նվազագույն սահմանաչափը 20.000 եվրո է, գումարի առավելագույն սահմանաչափ ամրագրված չէ:

Ուշադրություն. ծրագրի շրջանակում հնարավոր է, որ միննույն նախագիծը կրկին աջակցություն ստանա: Առավելագույնը երեք անգամ նույն նախագծին աջակցելու նախապայմանը նախագծի տեսանելի, բովանդակային զարգացումն է: Ամեն դեպքում շարունակական հատկացումների պահանջի իրավունք չի կարող լինել (§ 23 BHO): Ծրագրի միջոցները նախագծերին մեկնարկային ֆինանսավորում ապահովելու նպատակին են ծառայում: Այլ աջակցող ծրագրերից կամ այլ աղբյուրներից երկարաժամկետ ֆինանսավորում ստանալը նախագծերի հեղինակների խնդիրն է:

4. Ե՞րբ կարելի է սկսել նախագծի իրականացումը

Համաձայն օրենքի՝ աջակցություն կարող է տրվել սկզբունքորեն միայն այն դեպքում, երբ աջակցություն տրամադրելու որոշման ժամանակ նախագիծը դեռևս չի մեկնարկել: Այդուհանդերձ՝ հնարավոր է **աջակցություն ստանալու համար դիմում ներկայացնելու հետ մեկտեղ** ըստ § 44 BHO –ի արտոգործնախարարությանը հայտ ներկայացնել նախաձեռնությունը վաղաժամ մեկնարկելու վերաբերյալ: Այստեղ նախապայման է **միջոցների ներգրավումը սեփական և երրորդ աղբյուրներից: Նախաձեռնության վաղաժամ մեկնարկի համար բացառության կարգով տրված թույլտվության** դեպքում նախագծային ծախսերը կարող են հաշվվել հավանության մեջ նշված կոնկրետ ամսաթվից սկսած, եթե դրան հետո հաջորդելու է աջակցության հավաստագիրը: Սա նշանակում է, որ այդ ամսաթվից սկսած՝ նախագիծը հնարավոր է մեկնարկել **սեփական ռիսկով**, մինչև որ ստացվի հատկացման հավաստագիրը: Աջակցության նկատմամբ իրավունքը կարող է հիմնավորվել միայն աջակցության հավաստագրի ստացումով:

2021թ. սեպտեմբերին Գերմանիայում Բունդեսթագի ընտրություններ են: Ուստի հնարավոր է, որ Դաշնային բյուջեն 2022թ. տարեսկզբին դեռ հաստատված չլինի: Այդուհանդերձ, սկզբունքորեն, *բյուջեի ժամանակավոր կառավարման* ընթացքում նույնպես հնարավոր կլինի սահմանափակ ծավալով հավանության արժանացնել որոշ նախագծեր: Սակայն խորհուրդ ենք տալիս Ձեր նախագծերի իրականացման մեկնարկը հաշվարկել 2022թ. ամռանից:

5. Ինչպե՞ս է Գերմանիայի արտոգործնախարարությունը որոշում՝ որ ծրագիրը իրախուսել

Արտգործնախարարությունը դիմումների վերաբերյալ որոշում է կայացնում § 44 BHO-ի համաձայն: Մեծ է Գերմանիայի քաղաասարակության շահագրգռվածությունը՝ խորացնելու համագործակցությունը նշված երկրների քաղաասարակությունների հետ, իրականություն դարձնելու սեփական նախագծերը, ուստի արտգործնախարարության համար անհնար կլինի իր տրամադրության տակ եղած միջոցներով աջակցություն ցուցաբերել բոլոր ներկայացված գաղափարներին: Մասնակիցների վարչարարական ծախսերը և ջանքերը հնարավորինս խնայելու համար աջակցության վերաբերյալ որոշումը կայացվում է երկու փուլով՝

1. Նախնական քննարկման փուլ

Արդեն իսկ նախնական ընտրության ընթացակարգի շրջանակում կառանձնացվեն այն նախագծային գաղափարները, որոնք, համապատասխանելով վերոնշյալ չափանիշներին, աջակցություն ստանալու լավագույն հնարավորությունները կունենան, և որոնց կառաջարկվի աջակցային գումարներ ստանալու դիմում ներկայացնել: Այս **նախնական ընտրությունը կանցկացվի նախագծերի էսքիզների հիման վրա**, որոնք հակիրճ, բայց բովանդակալից կերպով կներկայացնեն նախագիծը: Այս փուլի ընթացքում **ծրագրի վերաբերյալ ընդհանուր, ինչպես նաև կոնկրետ նախագծային գաղափարների առնչվող հարցերի** դեպքում սիրով կարող եք դիմել արտգործնախարարության 601 վարչությանը:

Նախագծային էսքիզները (գերմաներեն կամ անգլերեն) կարող են ներկայացվել 2021թ. սեպտեմբերի 10-ից մինչև հոկտեմբերի 15-ը

<http://oepr.diplo.de>

կայքի միջոցով: Այս կայքում Դուք մանրամասն տեղեկություններ և ցուցումներ կգտնեք նախագծային էսքիզների հայտեր ներկայացնելու ընթացակարգի մասին: Արդեն իսկ ուղարկված նախագծային էսքիզներում հետագայում փոխոխություններ կատարելը բացառված է: 2021թ. հոկտեմբերի 15-ին կայքը կփակվի, և նոր նախագծային էսքիզներ չեն կարող ներկայացվել: Դրանից հետո այլևս նախագծեր ներկայացնելու հնարավորություն չի լինի: Այլ ճանապարհներով ներկայացված նախագծային էսքիզները քննության չեն առնվի: Այն նախագծերի դեպքում, որոնք նախորդ տարիներին արդեն իսկ աջակցություն են ստացել արտգործնախարարությունից, պետք է նոր էսքիզի հետ միասին ներկայացնել նաև նախորդ նպատակների իրականացման հաշվետվությունը (գնահատում):

Բոլոր ներկայացված նախագծային էսքիզների վերլուծությունից հետո՝ **նախնական տվյալներով՝ 2022թ. սկզբին, հավակնորդները կստանան գրություն**, որտեղ նշված կլինի, թե արդյոք նրանց դիմումը հնարավորություն կունենա բոլոր մյուս ներկայացված նախագծային գաղափարների հետ համեմատության մեջ հավանության արժանանալու և ֆինանսական աջակցություն ստանալու համաձայն §44 BHO-ի:

2. Դիմումի ներկայացման կարգը

Աջակցություն ստանալու վերաբերյալ դիմումներ կարելի է ներկայացնել այն ծրագրերի համար, որոնք դրական գնահատականի են արժանացել նախորդ փուլում: Դիմումը քննության կառնվի, եթե այն ներկայացվել է գերմաներենով կամ անգլերենով, բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին, փոստային ճանապարհով և առանց ուշացման:

Ո՞ւմ կարող եմ դիմել հարցերի դեպքում

Ձեր **ընթացիկ հարցերին** հաճույքով կպատասխանի Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի նախարարության 601 վարչությունը: Գրեք 601-oepr@diplo.de էլ. փոստի հասցեին կամ զանգահարեք 030/ 18 17- 4272 (Բելառուսը, Մոլդովան); - 7966 (Հայաստանը, Ադրբեյջանը, Վրաստանը); - 4917, - 97104 (Ռուսաստանը); - 8231 (Ուկրաինան); - 2148 հեռախոսահամարներով:

<http://oepr.diplo.de> կայքից օգտվելիս **տեխնիկական դժվարություններ** ունենալու դեպքում խնդրում ենք անմիջական կապ հաստատել տիկին Լուիսերի հետ. (հեռ.՝ 030 / 18 17 – 4272, էլ. հասցե՝ 601-2-1@diplo.de):